ՏԴ/0434/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 մարտի 2026 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՏԴ/0434/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի փետրվարի 25-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2025 թվականի հոկտեմբերի 31-ին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Գարեգին Գագիկի Թորոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով,

399-րդ հովածի 3-րդ մասի 2-րդ կետով և Արթուր Ռոլանդի Սարկիսովի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 399-րդ հովածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ 69145125 (ՏԴ/0434/01/25) քրեական վարույթը:

1.1. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ս.Մարդանյան) 2025 թվականի նոյեմբերի 4-ին որոշում է կայացրել թիվ ՏԴ/0434/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի փետրվարի 6-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՏԴ/0434/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Ս.Յուզբաշյան) 2026 թվականի փետրվարի 25-ին որոշում է կայացրել թիվ ՏԴ/0434/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի մարտի 2-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Գարեգին Թորոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 399-րդ հովածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա խախտելով «Թմրանյութերի և հոգեմետ (հոգեներգործող) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-ն որոշման պահանջները, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, ՀՀ-ում իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել և Վրաստանից մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելու և դրա տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելու եղանակով Եվրասիական տնտեսական միության մաքսային*

սահմանով և Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապօրինի ՀՀ է տեղափոխել առանձնապես խոշոր չափերով՝ 318,11 գրամ «Կոկաին», 45,55 գրամ «Հաշիշ», 7,33 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցներ:

Այսպես.

Ա.Ս.Մ.-ն, Գարեգին Գագիկի Թորոսյանի, Արթուր Ռոլանդի Սարկիսովի և քննությամբ ինքնությունը չպարզված այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, ՀՀ-ում իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերով՝ 318,11 գրամ «Կոկաին», 45,55 գրամ «Հաշիշ» և 7,33 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու դիտավորությամբ, Վրաստանից Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով և ՀՀ պետական սահմանով մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելու և դրա տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելու եղանակով թմրամիջոցների ապօրինի տեղափոխումը կազմակերպելու նպատակով, պայմանավորվածություն է ձեռք բերել քննությամբ դեռևս չպարզված վայրում, անձից և հանգամանքներում առանձնապես խոշոր չափերով՝ 318,11 գրամ «Կոկաին», 45,55 գրամ «Հաշիշ» և 7,33 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու և մաքսանենգությամբ ապօրինի ՀՀ տեղափոխելու վերաբերյալ:

*Այնուհետև, Ա.Մ.-ն, Գարեգին Թորոսյանին նյութապես շահագրգռելով, վերջինիս հանձնարարել է նրա անվամբ Լեհաստանից Վրաստան ներմուծված «**** ******-*» մակնիշի *** ***** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենայի տանիքի պատուռի տակ պատրաստված թաքստոցում պահված առանձնապես խոշոր չափերով՝ 318,11 գրամ «Կոկաին», 45,55 գրամ «Հաշիշ», 7,33 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցները մաքսանենգությամբ ապօրինի տեղափոխել ՀՀ:*

*Դրանից հետո, Ա.Մ.-ն հեռահաղորդակցման «ՎոթսԱփ» հավելվածով կապ է հաստատել խմբի անդամներից Արթուր Սարկիսովի հետ և վերջինիս ցուցում է տվել Գարեգին Թորոսյանի անվամբ Լեհաստանից Վրաստան ներմուծված «**** ******-*» մակնիշի *** ***** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենան Վրաստան-Հայաստան սահմանային գոտու չեզոք տարածքից Հայաստանի*

Հանրապետություն տեղափոխելու նպատակով որպես վարորդ գտնել Վրաստանի քաղաքացի:

*Այդ նպատակով խմբի անդամներից Արթուր Սարկիսովը, խմբի անդամների դիտավորության մասին չհայտնելով իր ծանոթ Դ.Կ.-ին, նյութապես շահագրգռել է վերջինիս՝ Վրաստանի և Հայաստանի Հանրապետության սահմանային գոտու չեզոք տարածքից Գարեգին Թորոսյանի անվամբ Լեհաստանից Վրաստան ներմուծված «**** ******-*» մակնիշի *** ****** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենան Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու համար՝ այդ կերպ ապահովելով հանցակիցների գաղտնիությունը և առանձնապես խոշոր չափերով 318,11 գրամ «Կոկաին», 45,55 գրամ «Հաշիշ», 7,33 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցները «**** ******-*» մակնիշի *** ****** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենայով մաքսանենգությամբ Հայաստանի Հանրապետություն տեղափոխելը:*

*Պայմանավորվածության համաձայն, 2025 թվականի հուլիսի 16-ին, ժամը՝ 11:00-ի սահմաններում, խմբի անդամներից Գարեգին Թորոսյանը՝ «**** ******-*» մակնիշի *** ****** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենայով, իսկ Արթուր Սարկիսովը և Դ.Կ.-ին՝ տաքսի ավտոմեքենայով, Թբիլիսի քաղաքից ժամանել են Վրաստան-Հայաստան սահմանային անցման կետ, որտեղ Գարեգին Թորոսյանը հիշյալ ավտոմեքենայով հատել է Վրաստանի սահմանը և սահմանային չեզոք գոտում սպասել Արթուր Սարկիսովին ու Դ.Կ.-ին: Վերջիններս, Վրաստանի սահմանը հատելուց հետո հանդիպել են Գարեգին Թորոսյանին, ով նախնական պայմանավորվածության համաձայն, ավտոմեքենան հանձնել է Դ. Կ.-ին, որից հետո միասին ժամանել են ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետ, որտեղ Գարեգին Թորոսյանն ու Արթուր Սարկիսովը որպես հետիոտն, իսկ Դ. Կ.-ին՝ որպես «**** ******-*» մակնիշի *** ****** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդ, հատել են ՀՀ պետական սահմանը՝ այդ կերպ ապօրինի ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով՝ 318,11 գրամ «Կոկաին», 45,55 գրամ «Հաշիշ», 7,33 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցները մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելով և դրա տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելու եղանակով Վրաստանից Եվրասիական*

տնտեսական միության մաքսային սահմանով և Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապօրինի տեղափոխել են Հայաստանի Հանրապետություն:

*Նույն օրը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների կողմից իրականացված «**** ******-*» մակնիշի *** ****** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենայի մաքսային գնման ընթացքում հիշյալ թմրամիջոցները հայտնաբերվել և վերցվել են (...)»*[1]*:*

4.1. Արթուր Սարկիսովի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(...) նա «խախտելով «Թմրանյութերի և հոգեմետ /հոգեներգործող/ նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-ն որոշման պահանջները, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, ՀՀ-ում իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել և Վրաստանից մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելու և դրա տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելու եղանակով Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով և Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապօրինի ՀՀ է տեղափոխել առանձնապես խոշոր չափերով՝ 318,11 գրամ «Կոկաին», 45,55 գրամ «Հաշիշ», 7,33 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցներ:*

Այսպես.

Ա.Ս.Մ.-ն, Գարեգին Գագիկի Թորոսյանի, Արթուր Ռոլանդի Սարկիսովի և քնությամբ ինքնությունը չպարզված այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, ՀՀ-ում իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերով՝ 318,11 գրամ «Կոկաին», 45,55 գրամ «Հաշիշ» և 7,33 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու դիտավորությամբ, Վրաստանից Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով և ՀՀ պետական սահմանով մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելու և դրա տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելու եղանակով թմրամիջոցների ապօրինի տեղափոխումը կազմակերպելու նպատակով,

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 165-167:

պայմանավորվածություն է ձեռք բերել քննությամբ դեռևս չպարզված վայրում, անձից և հանգամանքներում առանձնապես խոշոր չափերով՝ 318,11 գրամ «Կոկաին», 45,55 գրամ «Հաշիշ» և 7,33 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու և մաքսանենգությամբ ապօրինի ՀՀ տեղափոխելու վերաբերյալ:

*Այնուհետև, Ա.Մ.-ն, Գարեգին Թորոսյանին նյութապես շահագրգռելով, վերջինիս հանձնարարել է նրա անվամբ Լեհաստանից Վրաստան ներմուծված «**** ******-*» մակնիշի *** ***** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենայի տանիքի պաստառի տակ պատրաստված թաքստոցում պահված առանձնապես խոշոր չափերով՝ 318,11 գրամ «Կոկաին», 45,55 գրամ «Հաշիշ», 7,33 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցները մաքսանենգությամբ ապօրինի տեղափոխել ՀՀ:*

*Դրանից հետո, Ա.Մ.-ն հեռահաղորդակցման «ՎոթսԱփ» հավելվածով կապ է հաստատել խմբի անդամներից Արթուր Սարկիսովի հետ և վերջինիս ցուցում է տվել Գարեգին Թորոսյանի անվամբ Լեհաստանից Վրաստան ներմուծված «**** ******-*» մակնիշի *** ***** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենան Վրաստան-Հայաստան սահմանային գոտու չեզոք տարածքից Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու նպատակով որպես վարորդ գտնել Վրաստանի քաղաքացի:*

*Այդ նպատակով խմբի անդամներից Արթուր Սարկիսովը, խմբի անդամների դիտավորության մասին չհայտնելով իր ծանոթ Դ.Կ.-ին, նյութապես շահագրգռել է վերջինիս՝ Վրաստանի և Հայաստանի Հանրապետության սահմանային գոտու չեզոք տարածքից Գարեգին Թորոսյանի անվամբ Լեհաստանից Վրաստան ներմուծված «**** ******-*» մակնիշի *** ***** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենան Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու համար՝ այդ կերպ ապահովելով հանցակիցների գաղտնիությունը և առանձնապես խոշոր չափերով՝ 318,11 գրամ «Կոկաին», 45,55 գրամ «Հաշիշ», 7,33 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցները «**** ******-*» մակնիշի *** ***** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենայով մաքսանենգությամբ Հայաստանի Հանրապետություն տեղափոխելը:*

*Պայմանավորվածության համաձայն, 2025 թվականի հուլիսի 16-ին, ժամը՝ 11:00-ի սահմաններում, խմբի անդամներից Գարեգին Թորոսյանը՝ «**** ******-*» մակնիշի *** ***** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենայով, իսկ Արթուր Սարկիսովը և Դ.Կ.-ին՝ տաքսի ավտոմեքենայով, Թբիլիսի քաղաքից ժամանել են Վրաստան-Հայաստան սահմանային անցման կետ, որտեղ Գարեգին Թորոսյանը հիշյալ ավտոմեքենայով հատել է Վրաստանի սահմանը և սահմանային չեզոք գոտում սպասել Արթուր Սարկիսովին ու Դ.Կ.-ին: Վերջիններս, Վրաստանի սահմանը հատելուց հետո հանդիպել են Գարեգին Թորոսյանին, ով նախնական պայմանավորվածության համաձայն, ավտոմեքենան հանձնել է Դ.Կ.-ին, որից հետո միասին ժամանել են ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետ, որտեղ Գարեգին Թորոսյանն ու Արթուր Սարկիսովը որպես հետիոտն, իսկ Դավիթ Կարալաշվիլին՝ որպես ««**** ******-*» մակնիշի *** ***** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարողդ, հատել են ՀՀ պետական սահմանը՝ այդ կերպ ապօրինի ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով՝ 318,11 գրամ «Կոկաին», 45,55 գրամ «Հաշիշ», 7,33 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցները մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելով և դրա տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելու եղանակով Վրաստանից Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով և Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապօրինի տեղափոխել են Հայաստանի Հանրապետություն:*

*Նույն օրը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների կողմից իրականացված «**** ******-*» մակնիշի *** ***** լեհական հաշվառման համարանիշի ավտոմեքենայի մաքսային զննման ընթացքում հիշյալ թմրամիջոցները հայտնաբերվել և վերցվել են (…)»*[2]:

5. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Համաձայն՝ քրեական վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի վերաբերելի անձնական տվյալների մասին տեղեկանքի և քրեական վարույթի նյութերի՝ մեղադրյալ Գարեգին Գագիկի Թորոսյանը, Արթուր Ռոլանդի Սարկիսովը, բնակվում*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 162-164:

*են ***** *******, Գարեգին Գագիկի Թորոսյանը այս պահին գտնվում է ** ** «*********» ***-***, իսկ մեղադրյալ Արթուր Ռոլանդի Սարկիսովի վարչական հսկողությունը իրականացվում է ** ** ********* ******** ***** ******* մարմնի կողմից, հանրային մեղադրող Ա.Բոյաջյանը, մեղադրյալների պաշտպաններ Գայանե Պապոյանը, Ժորա Համբարձումյանը, Հայկ Հովհաննիսյանը նույնպես իրենց աշխատանքային գործունեությունը իրականացնում են ***** *******:*

Դատարանը հաշվի առնելով, որ քրեական վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում են ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարածքից դուրս, ինչպես նաև մեղադրյալները տվել են իրենց համաձայնությունը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, գտնում է, որ թիվ ՏԴ/0434/01/25 քրեական վարույթը պետք է փոխանցել ըստ ընդդատության՝ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[3]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործով Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից վարույթն ստանձնելու և նախնական դատաքննություններ նշանակելու մասին որոշում կայացվելուց հետո նշանակվել են թվով 4 դատական նիստեր, որոնցից որևէ մեկը չի հետաձգվել դատարանի այլ տարածքում գտնվելով պայմանավորված վարույթի մասնակիցների ներկայանալու անհնարինությամբ: Այսինքն՝ պետք է փաստել, որ քննության 4 ամիսների ընթացքում վարույթի մասնակիցների այլ դատարանի դատական տարածքում բնակվելը խոչընդոտ չի հանդիսացել քրեական գործը Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննելու համար: Հետևաբար՝ Դատարանը ընդունելի չի համարում թիվ ՏԴ/0434/01/25 քրեական գործի քննության նկատմամբ մասնավոր մասնակիցների ներգործությունը՝ վարույթն ըստ ընդդատության փոխանցելու առումով: Այսպես, (…) պարզ է դառնում, որ մեղադրյալներից Գարեգին Թորոսյանը ներկայումս հանդիսանում է ** ** «*********» ***-* կալանավոր, ում ներկայությունը*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 8, թերթեր 134-137:

դատական նիստերին ապահովելու պարտականությունը կրում է պետությունը, հետևաբար՝ ներկայումս ***** ****** վարչական տարածքում գտնվող քրեակատարողական հիմնարկում պահվելու հանգամանքը, որևէ էական ազդեցություն չի կարող ունենալ դատական տարածքում քննություն իրականացնելու վրա՝ չբացառելով մեղադրյալի այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելու հնարավորությունը (նախկինում գտնվել է ** ** «*******» քրեակատարողական հիմնարկում): Ավելին՝ թեև դեռևս չի քննարկվել ապացույցների ծավալը, սակայն մեղադրական եզրակացությամբ մատնանշված որպես մեղադրանքի կողմի ապացույց համարվող վկաներ Դ.Գ.Կ.-ին և Կ.Կ.Դ.-ն ևս չեն բնակվում***** ********: Ամփոփելով մեղադրյալների և վկաների մեծամասնության բնակության վայրի վերաբերյալ տվյալները՝ Դատարանը չի կարող եզրահանգել, որ դա Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքն է:

Ինչ վերաբերվում է (...) Երևան քաղաքում մեղադրյալների պաշտպաններ Գայանե Պապոյանի, Ժորա Համբարձումյանի, Հայկ Հովհաննիսյանի աշխատանքային գործունեության իրականացմանը, Դատարանը փաստում է, որ այն քրեական գործի ընդդատության հարցի համար էական համարելու դեպքում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ վարույթի քննության ընթացքում տեղի ունենա պաշտպանների աշխատանքային գործունեության տարածքի փոփոխություն կամ վարույթին ներգրավվեն այլ պաշտպաններ, որոնց գործունեության տարածքը հանդիսանա այլ դատարանի դատական տարածքը, ինչի արդյունքում կարող է առաջանալ քրեական գործն ըստ ընդդատության փոխանցելու վերաբերյալ հարցի քննարկման շրջապտույտ, ինչը չի կարող բխել վարույթը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքից: Ավելին, ներգրավվելու պահին պաշտպանը տեղյակ է եղել քրեական գործը Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվելու հանգամանքի մասին:

Միաժամանակ՝ Դատարանը փաստում է, որ սույն դեպքում բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով չի հիմնավորվել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի կանոնի կիրառմամբ չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում՝ հաշվի չառնելով վարույթի որոշ մասնակիցների այլ դատարանի դատական տարածքում բնակվելը դատական նիստերի բնականոն ընթացքին խոչընդոտ չհանդիսանալու հանգամանքը: Այսինքն՝ սույն դեպքում ծանրակշիռ փաստարկների վկայակոչմամբ չի հիմնավորել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից:

(…) Ամփոփելով վերոնշյալը Դատարանը գտնում է, որ թիվ ՏԴ/0434/01/25 քրեական գործն ընդդատյա է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին (…)»[4]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՏԴ/0434/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում,*

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 7-14:

որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[7]:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- վարույթին ներգրավված են թվով յոթ մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից մեղադրյալ Գ.Թորոսյանի բնակության վայրն է ***** ****** (ներկայում պահվում է ** ********** ********* «********» ********** *********), մեղադրյալ Ա.Սարկիսովի և պաշտպաններ Գ.Պապոյանի, Ժ.Համբարձումյանի, Հ.Հովհաննիսյանի բնակության վայրն է ***** ******, վկա Դ.Կ.-ի բնակության վայրն է ******* **********, վկա Կ.Դ.-ի բնակության վայրն է՝ ***** *****:

- Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս, ինչպես նաև այն, որ առկա է մեղադրյալների համաձայնությունը վարույթի տարածքային ընդդաությունը փոխելու վերաբերյալ, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից նշանակված նիստերի հետաձգումներից որևէ մեկը պայմանավորված չի եղել վարույթի մասնակիցների՝ տվյալ դատարանի դատական տարածք ներկայանալու անհնարինությամբ, գտել է, որ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից չի հիմնավորվել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշել է նաև, որ մեղադրյալների պաշտպանները վարույթի քննության ընթացքում կարող են փոփոխվել, ուստի նշված հանգամանքը քրեական վարույթի

---

[8] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

տարածքային ընդդատությունը փոխելու տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունենալ չի կարող[9]:

13. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու լիազորությամբ, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը մեղադրյալների համաձայնությամբ փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է փոխանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, սույն վարույթին ներգրավված են յոթ մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնց մեծամասնությունը՝ հինգ անձ, ներկայում փաստացի բնակվում (գտնվում) է ***** ****** ****** ****** ******** ********** ******** դատարանի դատական տարածքում: Հարկ է նշել, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ ***** ******* բնակվելու հանգամանքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը կասկածի տակ չի դրել:

14. Վերոգրյալը հիմք է տալիս փաստելու, որ սույն վարույթի փաստական հանգամանքների պայմաններում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմամբ ներկայացված հիմնավորումները բավարար չեն արձանագրելու, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունն արդարադատության շահի տեսանկյունից բացակայել է:

15. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՏԴ/0434/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և

[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

քրեական վարույթն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր է:

16. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՏԴ/0434/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ